

համառօտագրող գործւոյն, ամենադիւրին կիրառութեան համար դաշնակի ձև տալու: Արուեստաւորն իրեն տասն մատերով կարենալով խոնարհեցընել միանգամայն տասն ստեղծուրք և կամ զորոյմէլ տասն նշանները, պէտք է անտարակոյս կերպով քան զհամառօտակ զորին արադուլթիւնը գերազանցել, որուն ձեռքը մէկ նշանէ միւս նշանը կը դրոյմէ: Բայ աստի՛ այս գործովս անսխիտան գրութեան դժուարութիւնք կը վերնան, վասն զի այն նշանները թղթի վրայ որոյ և բացայայտ կերպով իրենց հեռքը կը դրոյմեն:

Օրիորդն կիլիոյ, Գաղղիոյ երեսփոխանաց խորհրդարանին մէջ ներկայացուած այս գործւոյս փորձին միջոց, որու ինքնին կատարողն էր, առանց դժուարութեան արտադրեց կարգացուած խօսքին մաս մը, և մի և նոյն ժամանակ կրցաւ նշանակել նաև կեղծեալ ընդհատող ինքնաբերական և շարժուածքը, նմանցընելու համար որչափ որ կարելի էր, խորհրդարանի նստի մը մէջ հանդիպած խօսակցութեւն (Օրիորդն կիլիոյ, որչափ որ կ'ըսուի թէ դաղղիերէն չէր հասկնար, բայց սակայն ամենայն հաւատարմութեամբ արտայայտեց լրամ ձայնները, և յետ արտայայտութեան կրցաւ ընթեռնուլ խօսքը, աչքէ անցընելով նշանքը որոց միտքը կը թարգմանէր: Փորձը շատ աւելի հաւատեցաւ երբ օրիորդն կիլիոյ իտալերէն խօսքին մաս մը կը թարգմանէր. վասն զի իր յիշողութիւն և հասկացողութեամբ կրցաւ իմաստները լրացընել և կէտերով մէկմէկէ

բաժնել. մինչդեռ դաղղիերէնի թարգմանութեանը վրայ չէր կրնար ընել: Այսու հանդերձ թարգմանութիւնն ըստ բաւականի հաւատարիմ էր, բայց ՚ի քանի մը ընթերցման պակասութիւններէն: Գործակիցն առանց հասկընալու գէշ կը կարգար, բառերէ նորօրինակ խօսքեր կը շինէր, տալով առաջին բառին վերջին վանկը՝ երկրորդին առաջին վանկին: Այս փորձս հաւատեց ձայնից նկարին և կամ արտայայտութեան ճշգրտութիւնը, վասն զի կարգացողին իմացականութիւնը չէր կրնար ուղղել եթէ գործիքը պակասութիւն ունենար:

Մինք չենք գիտեր կ'ըսէ օրագիրը, ուսկից այս հատուածս կ'առնուած, թէ Միքէլայ գործին խորհրդարանաց մէջ գործածական պիտի ըլլայ թէ ոչ, որովհետև որոշելէն առաջ, պէտք է ստուգել նախ թէ արդեօք կարելի է առ այս ըստ բաւականի յարմարաւոր գործաւորք և ընթերցողք գտնել: Պէտք է զիտնալ նաև թէ արդեօք կարելի է նշանաց ձեռագիր թարգմանութիւնը զանց ընել, և կամ թէ համառօտագրութեան ուղղակի տպագրութեան վերածել խօսակցութիւնքը, մասնաւոր յաշողակ և վարժ շարողք գործածելով: Այս դիպուածին մէջ ատենաբանք, որոնք իրենց խօսած ձառերը կ'ուզեն ունենալ, փոխանակ համառօտագրիչ արհեստաւորի ձեռաց թարգմանութեանը, իսկոյն տպագրուածն կ'առնենան:

Մեծ ինսպրովութիւն կ'ըլլայ ժամանակի թէ էրեսփոխանաց և թէ պաշտօնական օրագրաց համար:

Ն Ո Ր Պ Ա Տ Ո Ւ Ա Ս Տ

Քաղաքականացեալ աշխարհի բոլոր գիտնականքն այժմ ամենայն ջանքով գիւտի մը վրայ կը զբաղին, որ այժմեան դարուս այնչափ փառաց վրայ նոր պարծանք մի ևս կ'աւելցնէ:

Գիտութեան որ և իցէ ճիւղի մը մէջ,

չկային թերևս այնչափ խառնակութիւնք, անստուգութիւնք և մթութիւնք, ինչպէս կը գտնուին իմօրման և մարմնոց փտութեան երևութից մէջ: Անթիւ տարբեր են թաղրութիւնք և ընդդիմամարտ վարդապետութիւնք մի

առ մի իրարու յաջորդեցին, զորս կը պաշտպանէին գիտութեանց ամենահմուտ ախոյեանք . 'ի զուր բոլոր իրենց հանճարոյն վարդապետութեան ճիգն թափելով բնութեան ամենաթազուն գազտնիքն իմանալու համար :

Յետ այնչափ ուսմանց և աշխատութեանց, այս միայն յայտնի կ'երևեր, որ ամենասերտ կապակցութիւն մը կայ ընդ մէջ խմորման, փտութեան և տարափոխիկ հիւանդութեանց : Բայց վերջին տարիներու մէջ մանրացող գործին առջևնիս նոր աշխարհք մը բացաւ, եթէ կարելի է ըսել՝ աշխարհ անաւանստականաց, բազկացեալ յանթիւ ամենափոքր գործարանաւոր մարմնոց :

Ասոնց վրայ մարդու հանճարը սկըսաւ շուտով իր մանր հետազոտութիւնքը ընել . կը դիտէ թէ այս մանրացուցական էակներն ինչպէս կը ծնանին, կը մեծնան, կը բազմանան և կը մեռնին, որով կ'իմանայ անոնց պաշտօնը և կը ճանչնայ անոնց կարեւորութիւնը :

Այս գործարանաւոր էակները քանի մը հարիւրապատիկ մեծցնելով՝ հազիւ տեսանելի կ'ըլլան . ասոնք ամենապարզ մարմինք են, մի միայն խորչէ (cellule) կազմուած, բայց իրենց ծնունդը արտաքոյ կարգի է, այնպէս որ ըստ հաշուոյ Էնկելի, ասոնցմէ մին միայն 48 ժամուց մէջ 35,378 հատ կը ծնանի :

Յառաջ տանելով հետազոտութիւնները, վերջապէս կը գտնայ որ մասնրկաց շարժումն, որոնցմէ վերջը զանազան խմորելի հեղուկք բոլորովին տարբեր յատկութիւն ունեցող հեղուկաց կը փոխուին, այս անտեսանելի աշխարհի ամենափոքր կենդանիներէն կախու մըն ունին :

Ամեն առանձին խմորումն յառաջ կու գայ մասնաւոր էակի մը մեծնալէն, որ իրեն պէտք եղած նիւթը կ'առնու զինքը պարունակող բնակարանէն :

Յորմէ հետեւուց թէ փտութեան երևոյթը կը կախուի այլ և այլ յաջորդարար եղած խմորմանէ : Քիչ ժամանակէն անշուշտ այն ահաւոր տարա-

փոխիկ հիւանդութեանց պատճառներն ալ կը գտնուին, որ երբեմն երբեմն կը ճարակին բազմաքանակ քաղաքաց մէջ անբաւ բազմութեան մահ պատճառելով :

Կը գիտցուէր որ տարափոխիկ հիւանդութիւնները մէկմէկու կը փոխադրուին կամ ուղղակի շոշափմամբ, և կամ օդոյ միջոցով . և այս առթիւ մէջ մասնաւորապէս կը կոչուի տարափոխիկ ախտ . բայց չէր գիտցուեր ինչ բանի ընծայել այս փոխադրութիւնն : — Ոմանք կ'ըսէին թէ նուրբ ոգի մ'է կամ սկիզբն կամ տարր կամ ապակուութիւն ժանտախտի : Բայց ասոնք ամենն ալ տարտամ, անստոյգ և անորոշ զրուցուածք էին միայն, ուստի դեռ ատիսն ճշմարիտ պատճառները անծանօթ կը մնային, և զոհերը կը հազարապատուուէին :

Արդ գիտութիւնն՝ այս ահաւոր հարուածոց թիւր նուազեցուցած է ժանտախտին այն խորհրդաւոր տարրը տեսանելի ըրած է, զայն կենդանի էակ մը ապացուցած է, անջատած է, աշտոր ձեւը գծազգրած է և զայն մշակելու յարողած, բարձրագոյն գործարանաւորներէն առանձին բազմապատկելով, և այնպիսի պայմաններու մէջ պահելով որ կարենայ կատարել իր գոյութեան ամեն աստիճանները, Այս ազդակս մանրացուցական էակ մ'է, անոնց նման որոնք պատճառ կ'ըլլան խմորման և փտութեան :

Իւ ահա առժամայն կը բացատրուի ախտին տարափոխութիւնը : Այն մանրացուցական էակաց ընձիւղները կամ դպչելով և կամ օդէն մղուելով՝ մէկէ մը ուրիշի կ'անցնին, և երբ կը գտնան իրենց արտաքոյ կարգի աճեցուցման կարեւոր հանգամանքը, իսկոյն հիւանդութիւն մը կը պատճառեն՝ նման այն գործարանաւորին հիւանդութեան ուսկից ելեր էին :

Բայց գիտութիւնն այսչափով դո՛հ չեղաւ, բազմացնելով ժանտախտ պատճառող էակները, մասնաւոր պատրաստեալ հեղուկներու մէջ, այն կէտին

Հասաւ՝ որ կրցաւ այս մահառիթ էակը կենդանութեան առիթ մ'ընել։ Հանճարաւոր արհեստից միջոցով հիմա այս ախտին ընձիւղներուն կարողութիւնը նուազեցու վրայ է, և ասոնցմէ յառաջ կը բերեն նորանոր տեսակներ, որոնք ոչ միայն թունաւոր կարողութիւն չունին, այլ և առողջութեան օգտակար են։ Այսպիսի վիճակի մէջ այն ամենափոքր էակը բարձրագոյն կենդանեաց վրայ կը պատուաստին, ինչպէս սովորական մարդուս պատուաստը կ'ըլլուի, և անոնք այս առաւելութիւնն ալ ունին, որ զիրենք անվտանգ կը պահեն. ուստի տարափոխիկ հիւանդութիւն պատճառօր թէպէտ և բոլոր իրեն ապականիչ ազդեցութիւնն ունենայ, կը կորսնցընէ նոյն ժամանակ բոլորովին իրեն ազդեցութիւնը։

Այսպիսի արուեստով այլափոխեալ միքրոպայսց սերունդքն, (այսպէս կը կոչուին աներևոյթ աշխարհի այս էակներս), կրնան պահուիլ ամբափակ ապակեայ անօթոց մէջ և զրկուիլ ուր որ ժամատախտը կը ճարակի իբր պատուական յուռութուրնը։

Այս նոր և մեծ գիւտը գտաւ երևելին Բասդէօր իր մանր հետազոտութեամբը, անդամ Գաղղիոյ դիտութեց ճեմարանին։ Իր հետազոտութիւնքն մինչև հիմա մեծապէս օգտամատոյց եղան, մասնաւորապէս ելունդ հիւանդութեան դէմ, որ կը հարուածէ մեր ընտանի կենդանիները, մշակութեան մեծամեծ վնասներ պատճառելով։ Բայց իրեն գտածը նոր գրութիւն մ'է. նոր տեսարան մը մեր առջև բացաւ, որուն ընդարձակութիւնն 'ի սկզբան բոլորովին չտեսնուիր։

Շարունակելով հետազոտութիւննին վերջապէս պիտի կարենան գտնել բոլոր տարափոխիկ հիւանդութեանց պատճառները, և այլափոխել զանոնք անոնց իւրաքանչիւրին 'ի պատուաստ։ — Մենք հիմա պատշաճ պատուաստներով անայլայլելի մնալով, կրնանք այն ատեն նուազ երկիւզիւ կենալ մարդածախ հիւանդութեան հարուածոց դէմ, պա-

տերազմելով և յաղթելով անոր։

Անհաւաս և հակառակ դրութեամբ եզրղները համոզելու համար, որոնք անպակաս են, Բասդէօր զանազան փորձեր ըրաւ հասարակաց առջև, և ինքը ապահով և համոզուած իր երկայն և մտատանջ աշխատութեանց վրայ, անկասկած կերպով անոր յաղորդութիւնը նախազուչակեց։

Այս մահառիթ պատուաստիս փորձը կենդանեաց վրայ ընելէն առաջ, ամենայայտ կերպով ծանոյց թէ անպատուաստը որ ատեն և որչափ պիտի մեռնին, մինչդեռ կանխաւ պատուաստուածներուն համար կ'ըսէ թէ ապահով են։ Փորձը 50 ոչխարաց և 10 արջառոց վրայ եղաւ, որոնք Մէլէօնի շըրջականերէն ժողովուած էին 'ի փարալին Բուխյի-ը-Յօր, որ այս դիպուածոյս հանդիսարան ըլլալուն համար երևելի եղաւ։

Այս կենդանեաց կէսը պատուաստեցան ելընդային պատուաստով. տասնուհինգ օր վերջը բովանդակ նախիրը ելնդին սարսափելի ազդեցութիւնը ըզգաց իր ամենասաստիկ զօրութեամբ, և վրան 48 ժամ չանցած սկսաւ ահարկու մահը ճարակիլ 25 որոշեալ կենդանեաց մէջ, մինչդեռ մէկաւ պատուաստեալ կենդանիներն ողջ և անվնաս մընացեր էին դիակներու կոյտի մը մէջ։ Նախազուչակութիւնն ասկէ աւելի ազէկ կերպով մը չէր կրնար ճշգրտուիլ։

Բայց կը մնար զեռ տարակոյս մը. թէ Բասդէօր իր գործանոցին մէջ մահաբեր պատուաստը կը բաղադրեր արուեստակեալ ազդակներէ։ Արդ այս թունաւոր շարաւս իրացընէ ունէր արդեօք սաստիկ ազդու յատկութիւնները որ կ'որոշեն ելընդային արիւնը։

Այս խնդիրը լուծելու համար պաշտօնական յանձնաժողովի մը յանձնուեցաւ, որ 'ի Շարդըր փորձեց 20 պատուաստեալ ոչխարաց վրայ, և հօն ևս Բուխյի-ը-Յօրի փորձը ամենայն կերպով յաշողեցաւ։ Ասով ամեն տարակոյս փարատեցաւ, և մշակողը և կալուածատեարը փութացին նոր պա-

տոււաստին օգուտը ճանչնալ և դորձա-  
ծել իրենց հօտերուն վրայ :

Անցեալ տարի հոկտեմբեր ամսոյն  
1ին 160 հօտ պատուաստած էին , ու-  
րոնք կը բովանդակէին 50,900 անա-  
սուն , որոնց 3 մասը պատուաստեցին ,  
2 ոչ , այսինքն 33,576 առ 21,938 , ու-  
րոնք նախնաբար պատուաստած չէին  
բաղդատութեան համար : Պատուաս-  
տէն առաջ ելունդէն պատճառեալ կու-  
րուսոնները ամեն հօտերունը միանգա-  
մայն կը հասնէին մինչև 2986 անա-  
սուն : Պատուաստը գործադրելու ժա-  
մանակ 33,576 պատուաստելոց մէջէն  
260 հատ մեռան : Մի և նոյն ժամանակ  
21,938 անպատուաստից մէջէն՝ 366  
մեռան :

Առաջին խմբին վրայ պատուաստն ը-  
նելէն յետոյ , ելընդային հիւանդութե-  
նէ 5 ոչխար մեռան , ընդհակառակն  
անպատուաստներուն մէջ առաջուան  
պէս ախտը ճարակեցաւ :

Ուրիշ շատ յաջող փորձեր եղան 'ի  
Պուտա-Քնշտ և 'ի Քարուվար , գիտնա-  
կան անձանց ներկայութեան առջև :

Գաղղիոյ երկրագործական խորհրդ-  
դարանը Բասդէօրի պարգևեց 50 հա-  
զար Ֆրանգ , որպէս զի իր ուսմունքը  
յառաջ տանի , և շատ ուրիշ երկրա-  
գործական ընկերութիւնք իրենց հօտե-  
րը Բասդէօրի կը յանձնէին :

Անցեալ տարի օգոստոսի մէջ երբ  
'ի Լոնտրա բժշկական եօթներորդ համ-  
աշխարհական հանդէսն եղաւ , 3000էն  
աւելի բժիշկք աշխարհիս ամեն տեղե-  
րէն հօն ժողովուած , պարոն Բասդէօրի  
յայտնեցին իրենց զգացած մեծ զար-  
մացումն , իրեն մեծ գիւտին նկատ-  
մամբն . և Բրիտանական պետութիւնն  
իրեն անսովոր պատիւ մը ընծայեց ,  
հրատարակելով և տէրութեան ծա-  
խիւք բաժնելով Միացեալ թագաւո-  
րութեան մէջ այն երևելի ճառը զոր  
այն առթիւ խօսած էր :

Բասդէօր իր աշխատութեանց և մահ-  
առիթ հիւանդութեանց դէմն առնող  
այս կարևոր մեծ գիւտին համար ընդ-  
ունեցաւ Պատուոց Լեգէոնի կարգին

մեծ խաչի շքանշանը , իսկ իրեն գոր-  
ծակիցք Շամպերլանտ և Ռու' ապե-  
տութեան պատիւն ընդունեցան : Իսա-  
լիա անհող շիեցաւ գիտնական դաղ-  
դիացւոյն գիւտին վրայ . և ներկայ տար-  
ւոյս փետրուար 26ին կիրակի օրը , ընդ-  
նախագահութե լանցիլլոզդի - Պունն  
սանդի ասպետին , որ Միլանու թագա-  
ւորական անասնաբուժութեան դպրո-  
ցին տեսուչն է , ընտիր ճառ մը խօսե-  
ցաւ տարածելու նաև յիտալիա ելուն-  
դի պատուաստը :

Գպրոցին մեծ դահլճին մէջ ժողո-  
վուած էին շատ նշանաւոր գիտնա-  
կանք , երկպացուցիչք Տէրութեան և  
քաղաքաց , ու Լոմպարտիոյ երկրագոր-  
ծական և անասնաբուժութեան ընկե-  
րութեան , երեսունէն աւելի քաղաքա-  
տեսչութեանց , և երկրագործական ըն-  
կերութիւնք . շատ վարժապետք , բը-  
ժիշկք , երկրագործք , անասնաբոյժք ,  
ընդ ամենն 250էն աւելի անձինք : Բը-  
ժիշկն կրիֆֆինի , Լոմպարտիոյ անաս-  
նաբուժութեան ընկերութեան նախա-  
գահը , դեղեցիկ յիշատակութիւն մը  
ըրաւ այս գիւտիս վրայ . յետոյ կուժժո-  
նի վարժապետն բացատրեց ելընդային  
պատուաստին գործածութեան կերպը  
և նոյն օրը անասնաբուժութեան զրպ-  
րոցին մէջ եղած հրապարակական փոր-  
ձերու համառօտութիւնք :

Ժողովը լուծուեցաւ՝ ուղարկելով ե-  
րևելի և իմաստուն Գաղղիացւոյն այս-  
պիսի հեռագիր մը . « Առ վարժապետն  
Բասդէօր-Քարիզ , Լոմպարտիոյ անաս-  
նաբոյժք , երկրագործք , Պետական և  
քաղաքական իշխանութիւնք , բժիշկք և  
վարժապետք անասնաբուժութեան , ու-  
րոնք ներկայ են դպրոցիս մէջ ելըն-  
դային պատուաստի փորձերու , միաբե-  
րան կը մտղթեն ելընդային պատուաս-  
տի հեղինակին » :

Քանի մը վայրկեան յետոյ դպրոցին  
անդամահատութեան մեծ սրահին մէջ ,  
նոյն այն կուժժոնի վարժապետն պա-  
տուաստի փորձերն ըրաւ տկար ելըն-  
դային պատուաստով : Այս փորձս ե-  
ղաւ 5 կովուց , 4 ոչխարաց , 4 ճագա-

րաց, խողի մը և ձկնոյ մը վրայ: Որպէս զի այս կենդանիք առողջութիւննին ըստանան, պէտք է ուրիշ պատուաստ մի ալ ընել 15 օր վերջը: Հիւանդութեան առաջին հարուածէն անջնաս մնայր ստուգելու համար, 40 օր վերջը կենդանեաց մաս մը պիտի պատուաստի բուն ելընդային պատուաստով, և տեսնելու համար թէ արդեօք առողջութիւննին երկրորդ հարուածի մ'ալ

կ'ընդդիմանայ թէ ոչ՝ երկու ամիս վերջը դարձեալ պէտք է պատուաստել: Կը յուսանք որ նաև բոլոր փոխադրական հիւանդութեանց աղդակներն ալ գտնուին, և զանոնք նորաստու պատուաստից փոխանակեն, և ահա այս անտարակոյս պիտի ըլլայ գիտութեան ամենամեծ բարիքն՝ առ տառապեալ մարդկութիւնն:

Մ Ա Ն Շ Ի Ա Ն Յ Ք Ն

Մերձաւոր ժամանակաց մէջ մարդու մեծագոյն գործը պիտի ըլլայ Մանչի ենթածովեայ անցքն, որով Գաղղիոյ և Անգղիոյ փոխուքն մէկմէկու հետ պիտի միանան, Գալէի գծով: Ասոր քով մեծ բան մը պիտի չերևնան Ալպեանց անցքըն և պարանոցաց հատումն. — որոնք որչափ ալ մեծամեծ զժուարութեանց գործ ըլլան, բայց ասոր չափ յանդուզն և հոյակապ շինուածք չեն. այսպիսի ենթածովային ճամբայ մը, որ երկու տէրութիւնք իրարու հետ կը միացընէ դէմ առ դէմ, այսպիսի ճամբայ մը կըրնայ միայն հին ժամանակի մեծամեծ շինուածոց հետ համեմատիլ. — հընդկային մեհերաններն, եգիպտական շիրմներն և հռովմէական ջրմուղներն:

Եւ մինչդեռ քանի մը տարի առաջ յանդգնութիւն և անգործագրելիցնորք մը կ'երևար, կարծուածէն աւելի շուտով պիտի լիննայ: Արդէն նախնական գործերը սկսած են. պատրաստուած են նաև ճարտարապետական մէքենայք և ճարտարապետք գծագրած են արգէն թղթի վրայ ձեռնարկութեան ամենամանր տեղեկութիւնքը հանդերձ ամենայն ծախիք: Եւ Անգղիոյ օրագիրքը, Անցքին կամ փողոյն համար եղած վիճից առթիւ, ինչպէս ետքը պիտի խօսինք, իրենց սիւնակները կը լեցընեն մանրամասն տեղեկութիւններ տալով անցքին և դայիկոնաց ծովուն անդունդին մէջ գործած ճամբուն վրայ:

Անցքին պեղման համար Ռայլվուայ Ընկերութեան ճարտարապետներուն ձգած գիծը Անգղիոյ կողմէն, Շէյքսբիբ ըսուած ժայռին քով կը սկսի, Ֆոլքսոնի և Տոլբի միջոց, և կը հասնի գաղղիական ծովեզերքը կրիւնէ հըրուանդանին քիչ մը արևելեան կողմը, Սանկագի մէջ:

Նախ սկսեր են դադաթնահայեաց հոր մը փորել. որուն մէջ կ'իջնեն մետաղեայ վերելակով, ինչպէս կ'ընեն հանքաց մէջ, որ շոգեշարժ մեքենայով մը կը բանի: Այս խորութիւնը, յայտնի է, փորուելիք խաւերու երկրաբանական ծանօթութեան համար է. երբ սկսին շոգեկառօք առաջ երթալ անցքին մէջէն, խոտորնակի քիչ մը զառ 'ի վայր սրահ մը պիտի շինուի (ինչպէս 1<sup>4</sup> առ 80), որ երկրիս խորէն քանի մը հազարմեգրտեղ պիտի կտրէ — կարճև ցրնելով այսպէս Լանտրա երթալու ճամբան: Հիմակուան փորուած հորին խորութիւնը գրեթէ 60 մեգր է, անտի ուղիղ անկեամբ նուազ զառ 'ի վայրով դէպ 'ի դազլիական ծովեզերքը կ'երթայ, իր և Մանչ ծովուն գոռ ալեաց մէջ երեսուն մեգր թանձրութեամբ ժայռ մը թողլով: Ենթածովեայ Անցքին սրամագիծը եօթն անգղիական սաք է, որ քիչ ատենէն կրկնը պիտի ըլլայ:

Հազիւ թէ սկսան անցքին քննութիւնները ընել, շուտ մը դայիկոնին պէտքը զգային: Գիտեն ամենքը թէ այս